**Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի (www.smednc.am ) կողմից իրականացվող ֆինանսական աջակցության ծրագրեր**

Սկսած 2003 թվականից ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի շրջանակներում Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի (այսուհետ՝ ՓՄՁ ԶԱԿ) կողմից իրականացվում են ֆինանսական աջակցության ծրագրեր, որոնց հիմնական նպատակը վարկային երաշխավորությունների տրամադրման միջոցով սկսնակ և գործող ձեռնարկությունների համար նպաստավոր պայմաններով վարկային միջոցների հասանելիության ապահովումն է: Ներկայումս այդ ուղղությամբ իրականացվում են ֆինանսական աջակցության 3 ծրագրեր.

1. «Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն» ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորություններ են տրամադրվում սկսնակ գործարարներին, որոնք նախապես մասնակցել են սկսնակ գործարարների համար նախատեսված ուսուցողական ծրագրին և մասնակցության արդյունքում ներկայացրել են իրատեսական գործարար ծրագրեր: Տրամադրվող երաշխավորությունների առավելագույն գումարը կազմում է 5.0 մլն ՀՀ դրամ, որը 100%-ով ծածկում է վարկային պարտավորությունը, երաշխավորության ժամկետը կազմում է առավելագույնը 5 տարի, երաշխավորությամբ ստացված վարկի տոկոսադրույքը՝ 10%:

2. «Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից երաշխավորությունների տրամադրում» ծրագրի շրջանակներում գործող ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվում են վարկային երաշխավորություններ, եթե ձեռնարկությունը և նրա կողմից ներկայացված ծրագիրը գործընկեր առևտրային բանկի կամ վարկային կազմակերպության կողմից ճանաչվում է վարկունակ, սակայն առկա է գրավի անբավարարություն: Տրամադրվող երաշխավորությունների առավել գումարը կազմում է 15.0 մլն ՀՀ դրամ, որը չի կարող գերազանցել վարկի մայր գումարի 70%-ը, երաշխավորության առավելագույն ժամկետն է՝ 5 տարի,

երաշխավորությամբ ստացված վարկի տոկոսադրույքը չի կարող գերազանցել 15% դրույքաչափը: Առանձին դեպքերում, երբ առաջարկվող ներդրումային ծրագիրը հատուկ նշանակություն ունի տարածաշրջանային և/կամ ոլորտային զարգացման տեսակետից, տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվում են 15.0 մլն ՀՀ դրամը գերազանցող վարկային երաշխավորություններ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով, որոնց տրամադրման վերաբերյալ որոշումները յուրաքանչյուր դեպքի համար կայացվում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից:

3. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից 2015 թվականին մեկնարկել է «Գործարար նախաձեռնությունների աջակցություն» փորձնական ծրագիրը: Այս ծրագրի նպատակներն են նոր ՓՄՁ-ի սուբյեկտների և դրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծումը, ներքին և արտաքին ներդրումների խթանումը, Հայաստանի տնտեսական զարգացման նպատակով սփյուռքի ներուժի ներգրավումը, Հայաստանում նորարարական գործարար գաղափարների ներդրումը և արտահանման ներուժ ունեցող, ներմուծմանը փոխարինող ՓՄՁ սուբյեկտների ստեղծումն ու զարգացումը և ներգաղթի համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Ծրագրի նպատակային խմբերն են Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրության և ծառայությունների ոլորտներում գործող ՓՄՁ-ի սուբյեկտները, օտարերկրյա պետություններում բնակվող հայազգի ներկայացուցիչները, ովքեր ցանկանում են գործարարությամբ զբաղվել Հայաստանում:

Սույն ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից շահառուներին կտրամադրվեն վարկային երաշխավորություններ՝ վարկային պարտավորության մինչև 100%-ի չափով, սակայն շահառուից նախապես կպահանջվի իրականացնել դրամական ներդրումներ: